«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՌԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

2024-2029ԹԹ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Բովանդակություն

1. Նախաբան

2. Ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին

3. Իրավիճակի վերլուծություն

3.1 Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական եվ որակական արդյունքների վերլուծություն

3.2 Մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքների վերլուծություն

3.3 Համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ուժեղ և թույլ կողմերը

3.4 Ներկայացված են հաստատության խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմերը

3.5 Հաստատության շենքային պայմանների նպատակային գործածությունը, ուժեղ կողմերը և թերություններ

4. Նպատակների եվ խնդիրների սահմանում

4.1 Գործողություններ

4.2 Անհրաժեշտ միջոցներ

4.3 Ժամանակացույցը

4.4 Արդյունքների չափման մեխանիզմներ

4.5 Ռիսկեր, ռիսկերի կանխման գործողություններ

5. Վերջաբան

1. ՆԱԽԱԲԱՆ

<<ՀՀ Լոռու մարզի Կաթնառատի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի գործունեությունը ճիշտ և արդյունավետ կազմակերպելու համար կազմել եմ ծրագիր, որը կլինի պետության կողմից ընդունված բարեփոխումներին ներդաշնակ և կայուն զարգացող դպրոցի կառուցման ռազմավարությունը, ծրագրում ընդգրկված է դպրոցի ներկա իրավիճակի վերլուծությունը և սահմանված են նպատակներ ու խնդիրներ, որոնց իրականացմանը ուղղված գործողություններով՝ վեր հանված թերությունները կվերացվեն, և դպրոցը կդառնա այն վայրը, որտեղ սովորողը կկարողանա իրացնել ՀՀ Սահմանադրությամբ, <<Հանրակրթության մասին>>, <<Կրթության մասին>> ՀՀ օրենքներով, <<Երեխայի իրավունքների մասին>> կոնվենցիայով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված իրավունքները , ստեղծված համապատասխան միջավայրում կապահովվի նրա բազմակողմանի զարգացումը, առողջության և անվտանգության պահպանումը, ինքնակրթության և լրացուցիչ կրթության հնարավորությունները: Դպրոցի անձնակազմն էլ կկարողանա իրացնել Աշխատանքային օրենսգրքով, դպրոցի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված իրավունքները, աշխատել արժանապատիվ միջավայրում, իրեն զգալ արժևորված ու գնահատված:

Ներկայումս գործող կրթական համակարգը, նոր չափորոշիչների ներդրումը, նպատակ է հետապնդում սովորողների մոտ ձևավորել կարողունակություններ՝ ստացած գիտելիքները կյանքում կիրառելու, դպրոցն մասնագիտական հստակ կողմնորոշմամբ ավարտելու և իրենց ընտրած մասնագիտությամբ ապագան կառուցող շրջանավարտների կերտման, ովքեր պատրաստ են ձեռք բերված հմտությունները կիրառել ի շահ իրենց և իրենց երկրի: Սակայն վերջին տարիների արտաքին մարտահրավերները, անսպառ տեղեկատվությունը հասարակությանը հեռացրել են իրենց արմատներից, արժեհամակարգից, շատերը իրենց ապագան պատկերացնում են հայրենիքից դուրս, ձգտում են դեպի արևմտյան և եվրոպական բարքեր, ավանդույթներ և մշակույթ, դա կտանի ազգային արժեհամակարգի վերացմանը, մեր ազգային դիմապատկերի կորստին, արտագաղթը կխարխլի մեր պետության հիմքերը: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, կրթության և դաստիարակության գործընթացը պետք է կազմակերպել այնպես,որ մեր

սերունդը չկորցնի սերն ու հավատը դեպի հայրենիք, ազգային մշակույթ ու սովորույթներ, հոգևոր արժեքներ ու հարուստ ժառանգությունը: Դրանց պահպանումն ու սերունդներին փոխանցումը պետք է ապահովել դպրոցի, որակյալ կրթության և ուսուցչի շնորհիվ: Ուսուցիչն է,որ տալիս է երեխային հոգի, բարի կամք և մարդկային բարձր իդեալներ, սերմանում նրա մեջ սեր դեպի հայրենիք, պետություն և հասարակություն, հավատ ապագայի հանդեպ: Դպրոցը փոխաբերական իմաստով կարող ենք դիտարկել որպես պարարտ հող, որտեղ տարբեր ընտանիքներից գալիս են տարբեր բնավորության և դաստիարակության տեր երեխաներ, ովքեր որպես սերմեր վստահվում են մշակ-մանկավարժներին, այստեղ նրանց համար ապահովվում են հավասար պայմաններ, դպրոցը իր կողմից որդեգրված քաղաքականությամբ՝ բոլորի համար ապահովում է հավասար կրթություն, հավասար զարգացման հնարավորություններ:

Որակյալ կրթության ապահովման համար ներդրվել է Հանրակրթական պետական չափորոշիչը, այդ չափորոշչով կրթությամբ յուրաքանչյուր կրթական աստիճանի համար սահմանվել են վերջնարդյունքներ, միջնակարգ կրթության շրջանավարտին ներկայացվող որակական պահանջներ՝ կարողունակություններ, հիմնական շեշտը դրվում է ՏՀՏ-ների կիրառման, նոր մեթոդների ներմուծման վրա, որոնց շնորհիվ կրթության որակը էլ ավելի կբարձրանա, այն կդառնա ավելի արդյունավետ, մատչելի, բոլորին հասանելի, շարունակական (անկախ վրա հասած դժվարություններից), դպրոցն ավարտած յուրաքանչյուր աշակերտ կլինի կարողունակ քաղաքացի՝ մասնագիտական կողմնորոշում, հստակ արժեհամակարգ ու դիրքորոշում ունեցող: Բազմակարծիք, ներառական և մասնակցային կրթությամբ առավել կմեծանա կրթության գործընթացի յուրաքանչյուր մասնակցի դերը կառավարման հարցում, հատուկ ուշադրության կարժանացվեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները: Յուրաքանչյուր սովորողի համար ուսուցիչը կապահովի կրթության կազմակերպման հավասար մասնակցություն, հնարավորություններ և մատչելիություն, կկիրառվեն համընդհանուր ներառական կրթության սկզբունքներ՝ բացառելով բուլինգը և ամեն տեսակի խտրական վերաբերմունքը:

2. Ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին

Դպրոցի համառոտ տեղեկանք

Հասցե՝ Լոռու մարզ, գյուղ Կաթնառատ, Գյուղական հրապարակ 1, շենք 6

Տնօրենի հեռ.՝ +374 77 20 97 36

Պաշտոնական կայքէջ՝ katnarat.schoolsite.am

Էլ. փոստ՝ katnaratschool@yandex.com

Կազմակերպա-իրավական տեսակը՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

Իրավաբանական տեսակը՝ իրավաբանական անձ

Ենթակայությունը՝ մարզային

<<ՀՀ Լոռու մարզի Կաթնառատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը 2003թ. գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի Տաշիրի տարածքային բաժնում: 2017թ. Հաստատվել է դպրոցի նոր կանոնադրությունը, որը 2020 և 2022 թվականներին փոփոխություններ է կրել:

Ըստ տրված լիցենզիաների՝

դպրոցը բավարարում է հետևյալ կրթական կարիքները

նախադպրոցական կրթական ծրագիր՝ ավագ նախադպրոցական տարիքային փուլ (15 տեղ,լիցենզիայի համար՝ 0648 սերիան Ա)

Լիցենզիան տրվել է 2020թ. փետրվարի 24-ի

տարրական հանրակրթական՝ 1-ին աստիճան (31 տեղ, լիցենզիա 0767 սերիա Ա)

հիմնական հանրակրթական՝ 2-րդ աստիճան (47 տեղ, լիցենզիա 0756 սերիա Ա)

միջնակարգ հանրակրթական՝ 3-րդ աստիճան (44 տեղ, լիցենզիա 0624 սերիա Ա)

Լիցենզիան տրվել է 2011թ. դեկտեմբերի 5-ին

Դպրոցը գործում է հարմարեցված շենքերում՝ ժամանակավոր անհատույց օգտագործման իրավունքով, որպես դպրոց այդ շենքը սկսել է ծառայել 1990 թվականից ի վեր, վերջին անգամ վերանորոգվել է 2005 թվականիին, ընդհանուր առմամբ հիմնական մասնաշենքի վիճակը բավարար է, բայց այն չափերով շատ փոքր է, նույնիսկ դասասենյակների համար տարածքը բավարար չէ, այդ իսկ պատճառով տարրական դասարանները և նախակրթարանը տեղակայված են համայնքապետարանի առաջին հարկում: Բայց անկախ անբարենպաստ շենքային պայմաններից, տարիների ընթացքում դպրոցը ձեռք է բերել և շարունակում է պահպանել բարձր հեղինակություն հասարակության լայն շրջանում, փորձում է անել ամեն հնարավորինը՝ որակյալ կրթություն ապահովելու համար: Դպրոցն ունի 36 աշխատակից, 118 աշակերտ և նախակրթարանի 5 սան: Աշխատանքային շաբաթը՝ հնգօրյա է, գործում է միահերթ աշխատանքային ռեժիմով, դասերը սկսվում են 9:00-ին: Դպրոցում առկա հաստիքներն են.

	Հաստիքի անվանումը	Հաստիքի թիվը
1.	Տնօրեն	1
2.	Վարչատնտեսական համակարգող	1
3.	Տնօրենի տեղակալ	0,75
4.	ՄԿԱ գծով համակարգող	0,75
5.	ԴԱԿ	0,75
6.	Զինղեկ և քաղպաշտպանություն	1,3
7.	Ուսուցիչներ	20
8.	ՈՒսուցչի օգնական. ,	1
9.	Դաստիարակ	1
10.	Գրադարանավար	1
11.	Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ	0,75
12.	Անձնակազմի կառավարման մասնագետ/գործավար	1
13.	Հոգեբան	0,75

14.	Հավաքարար	2
15.	Պահակ	3
16.	Խոհարար	0,5
17.	Հաշվապահ	1
18.	Բանվոր	0,75

3. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Զարգացման ծրագրի կազմման և դրանով առաջնորդվելու էությունը, յուրաքանչյուր հավակնորդի նպատակադրումներն են՝ հետագա 5 տարիներին տվյալ ուսումնական հաստատությունում կրթության որակը բարձրացնելու և բարենպաստ ուսումնական միջավայր ստեղծելու, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ ձևավորելու, ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված, ՀՀ զարգացմանը միտված արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգ ձևավորելու:

Ապագայի նպատակները, խնդիրները և ռազմավարությունները մշակելու համար նախնառաջ պետք է վերլուծվեն հաստատության և նրա միջավայրի հարաբերությունները: Ներկա իրավիճակում, բացի անցյալի կատարողականի գնահատումից, այն ներառում է գնահատում, թե ինչ ռեսուրսներ ունի կամ որ ասպեկտներն են բացակայում: Արձանագրելով և առանձնացնելով ուժեղ կողմերը՝ կապահովվի դրանց կայուն շարունակականությունը, ինչպես նաև սահուն ներդաշնակումը կրթության բարեփոխումներին, որն էլ իր հերթին արդյունավետ լուծման ազդեցություն կունենա սահմանված ապագա թիրախների վրա: Առանձնացնելով թույլ կողմերը՝ զաարգացման ծրագրում կներառենք հետագայում ուսումնական հաստատության կողմից ձեռնարկվելիք միջոցառումների բովանդակային և բազմակողմանի լուծումները: Անհատի կրթական կարիքներին կրթության համապատասխանությունը որորշելու համար կատարվում է չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն,ինչը իրենից ներկայացնում է սովորողի կրթական գործունեության և պատրաստվածության բնութագիրը: Սա հնարավորություն է ընձեռում գնահատել առկա իրավիճակը, լինել ճկուն և դպրոցի առջև դնել նոր նպատակներ ու դրանց հասնելու համար գտնել նոր ուղիներ:

3.1 Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական եվ որակական արդյունքների վերլուծություն

Դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են նպատակ ունենալով ապահովել ՀՊՉ ներդրումը, յուրաքանչյուր աշակերտի անհատական կրթական կարիքների բավարարումը, համընդհանուր ներառական կրթության իրականացումը, դպրոցի ակտիվ ներգրավվածությունը սոցիալ-մշակութային միջոցառումներում, արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում սովորողների ներգրավվածությունը, ռազմահայրենասիրական և ֆիզիկական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքներում, դպրոցում ձևավորված ավանդույթների շարունակականություն և զուգահեռ նոր բարի ավանդույթների ձևավորում, ուսուցիչների ինքնակրթության և դասավանդման մեթոդների ստեղծագործական մակարդակի բարձրացում, ուսուցման մեթոդների իմացություն և կիրառում՝ ազգային, համամարդկային բարոյական արժեքների վրա հիմնված կրթություն և դաստիարակություն կազմակերպելու համար:

Կատարելով վերջին մի քանի տարիների ուսումնադաստիրարակչական աշխատանքների վերլուծությունը, մենք կկարողանանք վերհանել դպրոցի գործունեության այս ոլորտի առավելությունները և արձանագրել թերացումները՝դրանք շտկելու կամ վերացնելու նպատակով:

Հատատության ուսումնադաստիարակչական աշխատանքների որակական և քանակական արդյունքների ներկայացման համար նախ ներկայացնեմ վերջին 3 տարիների սովորողների քանակական տվյալները

Դասարանների թիվը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
1 –ին դասարան	1	1	1
2-րդ դասարան	1	1	1
3-րդ դասարան	1	1	1

4-րդ դասարան	1	1	1
5-րդ դասարան	1	1	1
6-րդ դասարան	1	1	1
7-րդ դասարան	1	1	1
8-րդ դասարան	1	1	1
9-րդ դասարան	1	1	1
10-րդ դասարան	1	1	1
11-րդ դասարան	1	1	1
12-րդ դասարան	1	1	1
Ընդամենը	12	12	12

Սովորողների թիվը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
1-ին դասարան	13	14	12
2-րդ դասարան	7	13	13
3-րդ դասարան	6	8	13
4-րդ դասարան	10	6	7
5-րդ դասարան	11	10	6
6-րդ դասարան	12	11	10
7-րդ դասարան	9	12	11
8-րդ դասարան	8	8	12
9-րդ դասարան	7	8	7
10-րդ դասարան	17	9	10
11-րդ	9	16	9

դասարան			
12-րդ դասարան	8	10	15
Ընդամենը	117	125	124

Այս ուսումնական տարում դպրոցում սովորում են 118 աշակերտ և նախակրթարանի 5 սան, աշակերտները հետևում են կարգապահական կանոններին, ունենք 15 գերազանց սովորող աշակերտ, չառաջադիմող, երկտարեցի և պարտուսից դուրս մնացած սովորողներ չունենք: ԿԱՊԿՈՒ սովորողների թիվը 8-ն է, նրանք ստանում են աջակցություն ՏՄԱԿ-ի կողմից, դպրոցում մանկավարժահոգեբանակ աջակցության թիմ չունենք, ունենք միայն համատեղությամբ աշխատող մեկ ուսուցչի օգնական և հոգեբանի թափուր հաստիք: Սակայն, անկախ այդ հանգամանքից, ԿԱՊԿՈՒ սովորողների ներառումը իրականացվում է ամեն հնարավոր տարբերակներով, ուսուցիչները ջանք չեն խնայում ԱՈՒՊ-ով սահմանված կարճաժամկետ և տարեկան նպատակներին հասնելու համար:

Ըստ ներքին գնահատման արդյունքների և տրամադրված տեղեկատվության, վերջին երեք տարիների ընթացքում դպրոցում իրականացվել են ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանով նախատեսված բոլոր աշխատանքները՝ յուրաքանչյուր կիսամյակի համար իրականացվել են ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր միջոցառումները, կազմվել է ուսումնական պլանը, բաշխվել է դպրոցական բաղադրիչով սահմանված ժամերը, իսկ այս տաարվանից նաև անհատական բաղադրիչով նախատեսված ժամերը, անցկացվել են խորհրդակցական մարմինների նիստերը՝ կարգի պահանջներին համապատասխան, իրականացվել են դասալսումներ, քննարկումներ և խորհրդակցություններ:

Նախորդ տարիներին մեծ թվով միջոցառումներ են իրականացվել, այդ թվում՝ սովորողների ֆիզիկական , հոգևոր, սոցիալական առողջությանը միտված ուսումնադաստիարակչական ծրագրեր և միջոցառումներ:

Տվյալներ ուսումնական հաստատության սովորողների ֆիզիկական, հոգեկան և սոցիալական առողջությանն ուղղված աշխատանքների վերաբերյալ

Հաստատությունում գրանցված ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը տվյալ ուստարում Չեն գրանցվել		
Ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումն կանխարգելելու ուղղությամբ իրականացված ուսումնական ծրագրերը և միջոցառումները		
Ծրագիրը կամ միջոցառումը (նշել թեման)	*Ամսաթիվը*	*Դասարանը*
1. Հանդիպում Տաշիրի ոստիկանական բաժանմունքի աշխատակիցների հետ ալկոհոլի և ծխախոտի օգտագործման բացասական հետևանքների մասին զեկույցի շրջանակներում	Մարտ 2021թ	7-12-րդ
2. Հանդիպում Տաշիրի ոստիկանական բաժանմունքի աշխատակիցների հետ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման արդյունքում կախվածության առաջացման թեմայով	Հունվար- մայիս 2022	7-12-րդ
3.Դաս –միջոցառում «Թրաֆիքինգի մասին»	2022	7-12-րդ
Ուսումնական հասատության կողմից երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, բուլինգի, երեխային զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկմանն ուղղված միջոցառումներ և մեխանիզմներ		

Միջոցառում	*Ամսաթիվ*	*Մասնակիցներ ը, դրանց թիվը*	*Առաջադրված մեխանիզմ*
Դպրոցի ընդհանուր ծնողական ժողովներ	Ընթացքում	Ծնողներ 60	Երեխայի դաստիարակության խնդիրների քննարկում

Հաստատությունում կազմակերպված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումները՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման ուղիների և կանխարգելման մասին սովորողների գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով

Դասընթացի անվանումը, միջոցառման թեման, օգտագործված ուսումնամեթոդական նյութերը	*Ամսաթիվ*	*Դասարանը(ները)*	*Մասնակիցների թիվը*
1.Սեռավարակներ	10.12.2020	8-12-րդ	55
2.Վերարտադրողական առողջություն	15.03.2021	8-12-րդ	34
3. ՁԻԱՀ-ի միջազգային օր	01.12.2022	8-12-րդ	55

Ուսումնական հաստատության ստեղծած ուսումնամեթոդական նյութերը և կազմակերպած միջոցառումները՝ ուղղված բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեմ, ինչպես նաև բուլինգի կանխարգելման ուղղությամբ

Դասընթացի անվանումը, միջոցառման թեման	Ամսաթիվ	Դասարանը(ները)	Մասնակիցների թիվը
1.Հանդուրժողականության ծրագիր	2007-2021	1-12-րդ	75

Այս միջոցառումների անցկացումը կրում է շարունակական բնույթ: Այստեղ մեծ է եղել և շարունակում է մեծ մնալ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի բաժնի աշխատակիցների դերը, ովքեր շարունակում են պարբերական հանդիպումներ ունենալ դպրոցի 7-12-րդ դասարանի սովորողների հետ և տարբեր թեմաներով զրույցներ վարել:

Ուսումնական հաստատությունում ամեն տարի նշվում է Գիտելիքի, Անկախության, Ուսուցչի տոները, Ամանորն ու Սուրբ ծնունդը, Հայոց բանակի օրը, Երկրաշարժի և Մեծ եղեռնի հիշատակի օրերը, հայ հայտնի գրողների, ստեղծագործողների, երգահանների ու արվեստի այլ ներկայացուցիչների հոբելյանական տարեթվերը, հայրենասիրական թեմաներով տարբեր միջոցառումներ:

Սովորողների կողմից կազմակերպված միջոցառումները և միջոցառումներին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը.			
Նկարագրել վերջին 3 տարում սովորողների կողմից կազմակերպված միջոցառումները	*Ամսաթիվ*	*Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ*	*Համադպրոցական կամ դասարանային*
1. ՀՀ Անկախություն, Հայոց բանակ, Մայիսյան հերոսամարտեր, հայրենասիրական այլ թենաներով միջոցառումներ	Ամեն տարի	85	Համադպրոցական
2. Ոսկե Աշուն, Ուսուցչի օր, Ամանոր, Կանանց միջազգային օր, հոբելյանական տարեթվեր	Ամեն տարի	90	Համադպրոցական
3. Եղեռնի տարելիցին, Ապրիլյան և 44-օրյա պատերազմներին և հիշատակի այլ օրերին նվիրված միջոցառումներ,մոմավառություն	Ամեն տարի	80	Համադպրոցական
4.Ազգային և եկեղեցական տոներ	Ամեն տարի	80	Ըստ դասարանների

Սովորողների մասնակցությունը հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը և մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը			
Նկարագրել վերջին 3 տարում հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը սովորողների մասնակցության դեպքերը	*Ամսաթիվ*	*Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ*	*Մեկնաբանություն*
1. Հիգիենայի պահպանման կանոնների մշակում	2021-2022	85	Քննարկվել է ԱԽ-ի Նիստում
2. ԱԽ-ի կողմից առանձին ոլորտների վերաբերյալ կանոնների մշակում	2022-2023	68	Քննարկվել է ԱԽ-ի Նիստում

Դպրոցը նաև անմասն չի մնում տարատեսակ արտադպրոցական և արտադասարանական միջոցառումների կազմակերպումից՝ էքսկուրսիաներ, արշավներ, այցելություններ տարբեր թատրոններ ու թանգարաններ:

Սովորողների համար կազմակերպված արտադպրոցական և արտադասարանական միջոցառումներ			
Նկարագրել վերջին 3 տարում սովորողների համար կազմակերպված արտադասարանական և արտադպրոցական	*Ամսաթիվ*	*Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ*	*Մեկնաբանություն*

միջոցառումները			
1.Այցելություն Թումանյանի, Շիրազի, Իսահակյանի տուն թանգարաններ	2020-2023թթ ընթացքում	45	Ծանոթություն մեծն ստեղծագործողների կյանքի մասնրամասնե ին
2.Այցելություն Ծիծեռակաբերդ, Մատենադարան, Աստղադիտարան	2020-2023թթ ընթացքում	40	Հետաքրքրական բացահայտումներ, խոնարհում Եղեռնի զոհերի հիշատակին
3.Էքսկուրսիա Գառնի,Գեղարդ, Օշական, Սարդարապատ, Խոր Վիրապ	2020-2023թթ. ընթացքում	60	Հայտնի պատմամշա կութային կոթողների ակնդրում

Տվյալներ ուսումնական հաստատության քաղաքացիական պաշտպանության պլանից բխող աշխատողների և աշխատակազմի հետ վերջին 3 տարիների ընթացքում իրականացվող միջոցառումների և վարժանքների վերաբերյալ

Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված ուսումնական նյութերը և պարագաները	*Ամսաթիվը*	*Դասարանը*	*Մասնակից սովորողների և աշխատակիցների թիվը*
Դասղեկի ժամերի ընթացքում պարբերաբար ՆԶՊ-ի ուսուցչի և դասղեկների ղեկավարությամբ անցկացվում են արտակարգ իրավիճակներին վերաբերող իրազեկող դասեր	25.09.2020	1-12 դաս.	145
Ուս. վարժանք հնարավոր երկրաշարժից պաշտպանվելու համար Ուս. նյութեր և պարագաներ՝ պատգարակներ, 1-ին օգն. անհրաժեշտ պարագաներ	01.03.2021	1-12դաս.	140
Ուս. վարժանք հնարավոր ճառագայթումից պաշտպանվելու համար Ուս. նյութեր և պարագա ներ՝ հակագազեր, դիմակներ, 1-ին օգն. անհրաժեշտ պարագաներ	15.04.2022	1-12դ	140

Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ 2020-2021 ուստարում

Հիմնական առարկաներ	*Սովորողների թիվը*			*Պետական պարտադիր առարկաներից տարեկան գնահատականների միջինը*			*4-րդ դաս. գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դաս. պետական ավար-տական քննությունների միավորների միջինը*		
	4-րդ. դաս.	9-րդ. դաս.	12-րդ դաս	4-րդ. դաս.	9-րդ. դաս.	12-րդ Դաս	4-րդ դաս	9-րդ դաս	12դդ. Դաս
Մայրենի	10			6,8			7,3		
Մաթեմատիկա	10			6,3			6,2	11,7	12,1
Ռուսաց լեզու	10	5	8	6,1	7,6	7,1		14	
Անգլերեն	10	2	8	6	7,6	6,5		19,0	
Հ. լեզու		7	8		7,3	7			11,4
Գրականություն		7	8		7,4	7,2		15,8	
Հ. աշխարհ.		5	8		7,5	7,1		13,2	
Հայոց պատմ.		7	8		7,5	7,4		14,1	13,5
Համ.պատմ.		7	8		7,6	7,5			
Հասարակագիտ.		7	8		7,6	6,9			
ՆԶՊ		7	8		8,1	9			
Ինֆորմ		7	8		7	8,5			
ՀԵՊ		7	-		7,7				
Հանրահաշիվ		7	8		6,9	6,5			
Երկրաչափություն		7	8		7	6,5			

Ֆիզիկա		2	2		7,3	6,5		12	
Քիմիա		7	8		7,3	7,1			
Կենսաբանություն		7	8		7,1	7,1			
Ֆիզկուլտուրա (10բալ)	10	7	8	8,4	8,7	8,7		8,9	9,4
Երաժշտություն	10			8,4					
Կերպարվեստ	10			8,5					
Շախմատ	10			8,4					
Ես և շրջակա	10			8,2					
Տեխնոլոգիա	10			8,1					
Ընդամենը	10	7	8						

Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ 2021-2022 ուսումնական տարում

Հիմնական առարկաներ	*Սովորողների թիվը*			*Պետական պարտադիր առարկաներից տարեկան գնահատականների միջինը*			*4-րդ դաս. գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դաս. պետական ավարտական քննությունների միավորների միջինը*		
	4-րդ. դաս.	9-րդ. դաս.	12-րդ Դաս	4-րդ. դաս.	9-րդ. դաս.	12-րդ դաս	4-րդ. դաս.	9-րդ. դաս.	12-րդ Դաս
Մայրենի	6			7,8			8,1		
Մաթեմատիկա	6			7,6			7,8	12	13
Ռուսաց լեզու	6	8	10	7,5	6,5	6,3		11,6	
Անգլերեն	6	8	10	7,5	6,5	6,8		15,5	
Հ. լեզու		8	10		6	6,6		10,3	10,3
Գրականություն		8	10		6,4	7,2		12,1	
Հ. աշխարհ.		8	10		6,5	7,4			
Հայոց պատմ.		8	10		7	7,3			12,5
Համ.պատմ.		8	10		6,8	7,0			
Հասարակագիտ.		8	10		6,5	7,6			
ՆԶՊ		8	10		7,8	8,1			
Ինֆորմ		8	10		7,5	8,1			
ՀԵՊ		8	-		7,1				
Հանրահաշիվ		8	10		6,1	6,7			
Երկրաչափություն		8	10		6,1	6,7			
Ֆիզիկա		8	10		6,3	6,6			

Քիմիա		8	10		6,1	6,8			
Կենսաբանություն		8	10		7,1	7,2		14	
Ֆիզկուլտուրա (10բալ)	6	8	10	8,7	8,6	8,6		8	
Երաժշտություն	6			8,2					
Կերպարվեստ	6			8,3					
Շախմատ	6			8					
Ես և շրջակա	6			8,1					
Տեխնոլոգիա	6			8,4					
Ընդամենը	6	8	10						

Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ2022-2023 ուսումնական տարում

Հիմնական առարկաներ	*Սովորողների թիվը*			*Պետական պարտադիր առարկաներից տարեկան գնահատականների միջինը*			*4-րդ դաս. գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դաս. պետական ավարտական քննությունների միավորների միջինը*		
	4-րդ. դաս.	9-րդ. դաս.	12-րդ դաս	4-րդ. դաս.	9-րդ. դաս.	12-րդ դաս	4-րդ. դաս.	9-րդ. դաս.	12-րդ Դաս
Մայրենի	8			8,1			7,4		
Մաթեմատիկա	8			7,5			7,42	12,4	11,7
Ռուսաց լեզու	8	8	16	7,5	6	8		11,5	
Անգլերեն	8	8	16	7,5	6	7,2		16	

Հ. լեզու		8	16		6	7,1		11,1	12,9
Գրականություն		8	16		6,4	7,1		11,8	
Աշխարհ.		8	16		6,4	7,2		12,9	
Հայոց պատմ.		8	16		6	7,2		11,1	15,6
Համ.պատմ.		8	16		6	7			
Հասարակագիտ.		8	16		6,4	7,6			
ՆԶՊ		8	16		7,1	8,8			
Ինֆորմ		8	16		7	8			
ՀԵՊ		8	-		6,5	6,5			
Հանրահաշիվ		8	16		6	6,7			
Երկրաչափություն		8	16		6	6,7			
Ֆիզիկա		8	16		6	6,9			
Քիմիա		8	16		6,6	7,2			
Կենսաբանություն		8	16		6,1	7,4			
Ֆիզկուլտուրա (10բալ)	8	8	16	8,5	8,4	8,6		8,7	8,7
Երաժշտություն	8			8,3					
Կերպարվեստ	8			8,3					
Շախմատ	8			8,1					
Ես և շրջակա	8			8					
Տեխնոլոգիա	8			8,3					
Ընդամենը	8	8	16						

Տվյալներ սովորողների առաջադիմության վերաբերյալ վերջին 3 ուստարիների համար՝ ըստ կրթական աստիճանների

Յուցանիշ	*2020-2021 ուստարի*			*2021-2022 ուստարի*			*2022-2023 ուստարի*		
	2-ից 4-րդ դաս.	*5-ից 9-րդ դաս.*	*10-ից 12րդ դաս*	*2-ից 4-րդ դաս*	*5-ից 9-րդ դաս.*	*10-12-րդ դաս*	*2-ից 4-րդ դաս.*	*5-ից 9-րդ դաս.*	*10-ից 12-րդ դաս*
Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների (տոկոսի հաշվարկը. տվյալ կրթական աստիճանում «9» և «10» տարեկան գնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	6 16,7%	6 12,8%	0 0%	9 22%	4 8,2%	2 5,7%	9 19,6%	5 10,9%	1 2,9%

Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների (տոկոսի հաշվարկը. տվյալ կրթական աստիճանում «4», «5» և «6» տարեկան գնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	15 42 %	22 47%	20 59%	18 44%	25 51%	20 57%	19 41%	26 56%	19 55%
Ավարտման գործակից՝ ըստ կրթական աստիճանների (հաշվարկ. տարրական, հիմնական և միջնակարգ դպրոցի ավարտական դասարաններում քննություններից դրական տարեկան գնահատական ստացածների հարաբերությունը նույն դասարանների սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	100 %	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%

Միասնական քննություններին մասնակիցների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ (տոկոսի հաշվարկ. 12-րդ դասարանի շրջանավարտներից միասնական քննություններին մասնակիցների թվի հարաբերությունը շրջանավարտների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) Լրացնել միայն 12-րդ դասարանի համար	---	---	1 12,5 %	---	---	2 20 %	---	---	3 20%

Բուհեր ընդունված շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի համեմատ (տոկոսի հաշվարկ. 12-րդ դասարանի շրջանավարտներից բուհեր ընդունվածների հարաբերությունը 12-րդ դասարանի սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) Լրացնել միայն 12-րդ դաս.	---	---	2 25%	---	---	3 34%	---	---	4 35 %

2023-2024 ուսումնական տարվանից դպրոցի 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ներմուծվեց հանրակրթական պետական նոր չափորոշիչը, որը մի շարք նորարարություններից զատ ենթադրում է նաև նախագծային աշխատանքների իրականացում, խմբակների վարում, որը երեխաների մոտ կզարգացնի վերլուծական մտածողություն, առավել հետաքրքիր կդարձնի ուսուցման գործընթացը, իսկ ուսման մեջ չառաջադիմող երեխաները երկարօրյա ուսուցման շնորհիվ կստանան աջակցություն ուսուցիչներից և իրենց լավ սովորող ընկերներից։ Մեր դպրոցի վերոնշյալ դասարաններում 2023 թվականի առաջին կիսամյակում հաջողությամբ իրականացվել են և շարունակում են իրականացվել նախագծային ուսուցումը և խմբակների ծրագրերը, մասնավորապես՝

Նախագծային ուսուցում	*Խմբակ*
1. << Կաթնառատ տարածաշրջանի	1. <<Ընթերցանության գաղտնիքները>>

աշխարհագրության ուսումնասիրությունը>> Լուսինե Ավագյան Սեդրակի (Աշխարհագրություն) 2. <<Լոռու մարզի դեղաբույսերը>> Անիկ Մովսիսյան Միսակի (Կենսաբանություն) 3. <<Կաթնառատի բնակավայրի կայուն զարգացումը>> Լուսինե Ավագյան Սեդրակի (Աշխարհագրություն) 4. <<Կանաչ դաշտը>> Անահիտ Ղազարյան Ռուբիկի (Գրականություն) 5. <<Տաշիր համայնքի մշակույթը>> Հայկ Հունանյան (Պատմություն)	Լաուրա Մեջինյան Սամվելի 5-րդ դասարան 2. <<Ընթերցանություն>> Արմինե Կիրակոսյան Յուրիկի 2-րդ դասարան 3. Ինտերակտիվ ընթերցանություն Անահիտ Ղազարյան Ռուբիկի 7-րդ դասարան 4. Առողջ ապրելակերպ Հայկ Առաքելյան Արմուսի 5-րդ և 7-րդ դասարան

6. <<Ցորենի աճը տարբեր պայմաններում> Անիկ Մովսիսյան Միսակի (Կենսաբանություն)	

Հետաքրքրական է այն, որ նախորդ ուստարում դպրոցի 11-րդ դասարանի աշակերտները կամավորության հիմունքներով ստեղծել են Աշակերտական գործարար ընկերություն և <<Տնտեսագիտություն>> առարկայի շրջանակներում իրականացրել են գործնական դասընթաց, նրանք իրենց սեփական միջոցների հաշվին արտադրել են պայուսակներ և այնուհետև վաճառել դրանք: Այս տարի էլ նույն սկզբունքով զբաղվում են մոմերի արտադրությամբ, գոյացած միջոցների հաշվին ցանկանում են ընդլայնել արտադրությունը:

Դպրոցի աշակերտները նախորդ տարիներին մասնակցել են մի շարք մրցույթների, այդ թվում <<Կենգուրու>>, <<Մեղու>>, ասմունքի և այլ մրցույթների: Այժմ վերջիններս կորցրել են իրենց հետաքրքրությունը, երեխաները ձգտում են դեպի նոր գաղափարներ, այս ուսումնական տարում նրանք առավել մեծ հետաքրքրությամբ սկսել են մասնակցել ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված մրցույթներին, ինչպիսիք են <<Մոլորակն ունի իմ ու քո օգնության կարիքը>>, <<Իմ կյանքը համայնքում 5>> և այլն:

3.2 Մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքների վերլուծություն

Մանկավարժական համակազմի գործունեության լավագույն ցուցանիշը հանդիսանում է սովորողի անձնային, ինտելեկտուալ զարգացումը, նրա՝ որպես անձի, գործունեության սուբյեկտի կատարելագործումը: Մանկավարժական համակազմը համալրված է փորձառու և որակյալ կադրերով, ուսուցիչների մեծ մասը ունի 20 տարվանից ավելի աշխատանքային փորձ, վերջինս համադրելով

նորարարական մեթոդների և տեխնոլոգիաների հետ ստանում ենք ցանկալի արդյունք: Դպրոցի 24 մանկավարժներից 19-ը ունեն բարձրագույն կրթություն, 5-ը միջին մասնագիտական, որոնցից 2-ը հաղթահարել են կամավոր ատեստավորման անցողիկ շեմը՝ 60 և 66,3 միավորով: 2 ուսուցիչ էլ դիմել են Կառավարության կողմից մշակված նախագծով բարձրագույն կրթություն ստանալու գործընթացին մասնակցելու ցանկությամբ:

Մանկավաժական համակազմ

1.	Ուսուցիչներ	20
2.	Զինղեկ և քաղպաշտպանություն	1
3.	Ուսուցչի օգնական	1
4.	Դաստիարակ	1
5.	Գրադանավար	1

Ուսուցիչների թիվն ըստ տարիքի

Ուսուցիչների թիվը	*2020-2021 Ուստարի*	*2021-2022 ուստարի*	*2022-2023 ուստարի*
Մինչև 30 տարեկան	3	1	0
31-ից 40 տարեկան	4	3	4
41ից 50 տարեկան	2	2	2

51-ից 55 տարեկան	4	6	5
56 տարեկան և ավելի	7	7	8

Դեռևս համավարակով պայմանավորված ուսուցիչները մեծապես բարելավեցին իրենց կարողությունները տեղեկատվական տեխնոլոգիաների դաշտում և կարողացան պատշաճորեն իրականացնել հեռավար ուսուցում՝ սկզբում Zoom հարթակում, այժմ էլ մեծամասնությունը հմտորեն կիրառում է MS Teams հեռավար հարթակն իր բոլոր հնարավորություններով, օգտվում է առկա էլեկտրոնային կրթական ռեսուրսներից: Դպրոցում շատ է կարևորվում ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական զարգացումը. ամեն տարի ուսուցիչների 20 տոկոսը վերապատրաստվում և մասնակցում է հերթական ատեստավորման, բոլոր ուսուցիչները մասնակցել են ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացված ՀՊՉ վերապատրաստումներին և, հիմա էլ, մշտական կապը պահում են նրա հետ: MS Teams-ում ուսուցիչների մեծ մասը ընդգրկված են ԿԶՆԱԿ-ի կողմից ստեղծված խմբերում և այնտեղ ստանում են իրենց հուզող շատ հարցերի պատասխաններ:

Ընդհանուր առմամբ մակավարժների մասնագիտական զարգացման կարիքները կապված են նոր չափորոշչի ներդրման հետ, այդ ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետությունը ստուգելու նպատակով հաճախ իրականացվում են դասալսումներ, հետո քննարկումներ ուսուցիչների հետ առանձին և նաև համապատասխան մասնապմբերում, նման քննարկումների շնորհիվ նրանք սկսում են օբյեկտիվորեն գնահատել իրենց մասնագիտական զարգացման կարիքները, շահագրգիռ են դառնում փնտրելու և գտնելու դասընթացներ, հնարավորություններ և ռեսուրսներ, որոնք կօգնեն իրենց կատարելագործվել, ուսուցման գործընթացը կազմակերպել չափորոշիչներին համապատասխան: Սակայն պետք է նաև նշեմ, որ մանկավարժական ողջ համակազմը ծանոթ է չափորոշչային նոր պահանջներին և թեմատիկ պլանավորումը կատարվել է այդ պահանջներին համապատասխան: ԲՏՃՄ

առարկաների որոշ մասնագետներ հնարավորությունների սահմաններում իրականացնում են լաբորատոր աշխատանքներ, եթե դրանք հատուկ նյութատեխնիկական միջոցներ չեն պահանջում, առաջնորդվում են <<լավ է մեկ անգամ տեսնել, քան հազար անգամ լսել>> սկզբունքով և աշակերտին առավելապես մասնակից են դարձնում իրականացվող լաբորատոր և գործնական աշխատանքներին: Նոր պահանջները մի փոքր անհարմարություններ են առաջացնում, կապված նյութատեխնիկական աղքատիկ բազայի, ՏՀՏ կիրառման, ուսուցիչների ավագ սերնդի աշխատելառճի անհամապատասխանության, դասագրքերի բացակայության կամ էլեկտրոնային տարբերակով հասանելիության հետ, ելնելով դրանից և այն փաստից, որ երիտասարդ ուսուցիչները փոքր թիվ են կազմում՝ մեծ մասը միջին տարիքից բարձր անձինք են, ցանկալի է հնարավորինս ավելի հաճախ կազմակերպել ՏՀՏ ոլորտի տիրապետման, մեդիագրագիտության թեմաներով սեմինարներ, վերապատրաստումներ: Բայց պետք է նաև արձանագրել, որ նման միջոցառումներին մասնակցության համար պահանջվում են պայմաններ, ինքնակրթության հնարավորություններ,որոնք, սակայն մեր դպրոցը չի կարող լիարժեք ապահովել, քանի որ դպրոցը և բնակավայրը ունեն մի շարք հիմնախնդիրներ, ինչը մեծ դժվարություններ է ստեղծում ուսուցիչների համար, մասնավորապես դպրոցում խափանված համակարգիչներ՝ առկա 10 համակարգիչներից աշխատում են միայն 3-ը, որոնք էլ բավականին հին են և լիարժեք չեն ծառայում ուսուցիչներին և աշակերտներին, թույլ ինտերնետ կապը, ինչը խոչընդոտում է մասնագիտական կատարելագործման ուղղությամբ կազմակերպվող տարատեսակ առցանց սեմինարների, վեբինարների, տարբեր միջազգային և հանրապետական կրթական ծրագրերի, ֆորումների մասնակցությանը:Համայնքում տրանսպորտային հիմնական երթուղու բացակայությունը անդրադառնում է կազմակերպվող առկա հանդիպումներին ուսուցիչների մասնակցությունը ապահովելու վրա: Բայց ուսուցիչներից շատերը պատրաստ են հաղթահարել այդ դժվարությունները՝ մասնագիտական կատարելագործման ճանապարհին: Իհարկե կան նաև ուսուցիչներ, ովքեր պասիվություն են դրսևորում ինքնակրթության, ինքնազարգացման հնարավոր միջոցառումներին մասնակցության հարցում, բայց դպրոցը մշտապես հորդորում է, ուղղորդում է նման ուսուցիչներին փոխել իրենց աշխատելառճը, պատրաստ է ունեցած սուղ դրամական միջոցներից որոշակի մաս հատկացնել նրանց ինքնակատարելագործման միջոցառումներին մասնակից դարձնելու համար: Ամեն կերպ

խրախուսում է տարբեր վերապատրաստումների, կամավոր ատեստավորման, տարրակարգի շնորհման մասնակցելու ցանկությունը և աջակցում է նման ցանկություն ունեցող ուսուցիչներին:

3.3 Համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ուժեղ և թույլ կողմերը

Դպրոցում շատ է կարևորվում համագործակցությունը պետական և հասարակական տարբեր կառույցների հետ՝ համարելով այն միջավայր, խթան սովորողների սոցիալական դրսևորումների ձևավորման և զարգացման, սոցիումին ինտեգրվելու և քաղաքացիական գիտակցություն ձևավորելու համար: Դպրոցը համագործակցում է համայնքի հետ, աջակցում համայնքի կազմակերպած միջոցառումների անցկացմանը, օրինակ դպրոցի սաները մասնակցեցին համայնքի կողմից կազմակերպված Կաթնառատ գյուղի 100 ամյակի մեծ տոնակատարությանը, ամեն տարի մասնակցում են համայնքի հետ համատեղ անցկացվող համապետական շաբաթօրյակներին, դպրոցի աշակերտներից կազմվում են խմբեր և ուսուցիչների ղեկավարությամբ կազմակերպվում և մաքրվում է գյուղի ողջ տարածքը: Համայնքի ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, մասնավորապես, ազգային տոներ և տոնակատարություններ, հիշատակի օրեր: Դպրոցի աշակերտներն տարբեր տարիների իրականացրել են և շարունակում են իրականացնել տարբեր նախագծային աշխատանքներ, որոնք վերը թվարկել եմ, դրանք նաև միտված են համայնքի կարիքների հետազոտմանը և նույնիսկ դրանց մասնակի վերացմանը:

Դպրոցը սերտ համագործակցում է կրթության կառավարման մարմինների՝ ՀՀ Կառավարության, ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ՀՀ Լոռու մարզպետարանի հետ, ենթարկվում է դպրոցին վերաբերող Կառավարության ընդունած որոշումներին, կատարում է

նախարարի հրամանները, մարզպետի որոշումները, ստանում է նրանցից համապատասխան հանձնարարականներ: Ֆինանսավորվում է մարզպետարանից, վերջինս հաստատում է դպրոցի նախահաշիվը, գնումների պլանը և այլ ֆինանսական հարցեր: Դպրոցը մեծ աջակցություն է ստանում կրթության կառավարման մարմիններից՝ ցանկացած հարցում, իսկ ամենամեծ աջակցությունը կլինի Կառավարության որոշմամբ նոր կրթահամալիրի կառուցումը, այն նախատեսված է 2026 թվականին, համապատասխանելու է բոլոր սահմանված նորմերին. ամբողջ մանկավարժական, աշակերտական և ծնողական համակազմը սպասում է այդ հրաշք թվացող իրադարձությանը, հավատացած ենք, որ այն կիրագործվի:

Շահառու կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում դպրոցը բավարարում է ուսումնադաստիարակչական աշխատանքներով պայմանավորված հաստատության պահանջներն ու կարիքները: Դպրոցը համագործակցում է այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են .

Շահառու գործընկերները	Նրանց գործունեությունը
1. Հայաստանի էլեկտրացանցեր ՓԲԸ	Էլեկտրամատակարարում
2. <<Խանում Գրիգորյան>> ԱՁ	Սննդամթերքի մատակարարում
3. <<Նորայր Սարգսյան>> ԱՁ	Շինապրանք, տնտեսական ապրանք
4. <<Լիանա Աբովյան>> ԱՁ	Գործավարական փաստաթղթեր, գրենական պիտույքներ
5. Գրիֆուս ՍՊԸ	Քարթրիջների լիքավորում
6. Այքոմ	Ինտերնետ կապ

7. Հարմոնիա	Ինտերնետ կապ
8. <<Արմեն Փափախչյան>> ԱՁ	Համակարգչի վերանորոգում
9. <<Ինտերակտիվ կրթության զարգացում>> հիմնադրամ	Ուսուցիչների վերապատրաստում
10. Լոռու մարզ թերթի խմբագրություն	Մրցույթի հայտարարություն, թերթի բաժանորդագրություն
11. <<Կրթության>> թերթի խմբագրություն	Թերթի բաժանորդագրություն

Ճշմարիտ է այն, որ դպրոցը չի կարող լուծել իր առջև ծառացած խնդիրները՝ նույնիսկ ունակ ու պատրաստ լինելու դեպքում, եթե միայնակ է: Անհրաժեշտ են կոնստրուկտիվ հարաբերություններ վերը նշված մարմինների, կազմակերպությունների և իհարկե կառավարման ու խորհրդակցական մարմինների հետ: Կարևորելով նաև երեխայի միջավայրի ընդլայնումը, արտադպրոցական կրթության, միջոցառումների դերը նրանց կյանքում, նախատեսվում է ընդլայնել համագործակցության շրջանակը տարբեր հասարակական և պետական կազմակերպությունների հետ, արդեն այս պահին քարտեզագրվել են այն պոտենցիալ կառույցները, որոնց հետ համագործակցային հարաբերություններ հաստատելով մենք կապահովենք սովորողների մոտ շրջակա միջավայրի պահպանության, բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում, աջակցություն մասնագիտական կողմնորոշման հարցում:

Ուժեղ կողմեր

- Լիազորված մարմինն անշեղորեն իրականացնում է դպրոցի ընդհանուր կառավարումը, դպրոցի գործունեության վերահսկողությունը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը, ամեն հարցով աջակցում է դպրոցին
- Դպրոցը համագործակցում է կրթության կառավարման մարմինների հետ, կատարում է լիազոր մարմնի՝ օրենքին չհակասող հանձնարարականները
- Մասնակցում է կրթության ոլորտում կազմակերպված մարզային միջոցառումներին/խորհրդակցություններ ,սեմինարներ, հանդիպումներ/
- Համագործակցային հարաբերություններ են հաստատված ԿԳՄՍ նախարարության, Լոռու մարզպետի աշխատակազմի, Տաշիրի համայնքապետարանի, Կաթնառատի վարչական ղեկավարի, ինչպես նաև ՆԳՆ ոստիկանության բաժնի, ԱԻՆ-ի հետ
- Սերտ համագործակցում ենք նաև ԿԶՆԱԿ-ի հետ, ով ապահովում է դպրոցը նորարարություններով և զարգացման հնարավորություններով, ԿՏԱԿ-ի հետ՝ ապահովում է էլեկտրոնային համակարգերի անխափան գործունեությունը, ԳԹԿ-ի հետ՝ ապահովում է սովորողների կրթության որակի, առաջադիմության բացահայտումը և ՏՄԱԿ-ի հետ՝ ապահովում է ԿԱՊԿՈՒ սովորողների աջակցությունը, նրանց լիարժեք ներառումը:
- Շահառու կազմակերպությունները ապահովում են բոլոր անհրաժեշտ ապրանքներով և ծառայություններով, ինչ անհրաժեշտ է դպրոցի բնականոն գործունեության համար

Թույլ կողմեր

- Հասարակական տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության բացակայություն
- Համայնքի կողմից ոչ բավարար ուշադրություն

- Փոքր է համայնքի հետ իրականացվող միջոցառումների ծավալը
- Բնակավայրից դուրս կազմակերպվող միջոցառումներին մասնակցության բարդություններ՝ պայմանավորված աշակերտներին տեղափոխելու տրանսպորտային սահմանափակումներով
- Չկան անհատ բարերարների ներդրումներ, որոնք կնպաստեն հարմարավետ ուսումնական միջավայրի ստեղծմանը
- Բացակայում է համագործակցությունը այլ ուսումնական հաստատությունների հետ, չեն կազմակերպվում այլ հսատությունների հետ համատեղ միջոցառումներ, մրցույթներ:

3.4 Ներկայացված են հաստատության խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմերը

Դպրոցում ուսումնական ու դաստիարակչական գործընթացների լիարժեք կազմակերպմանը նպաստում են ներդպրոցական խորհրդակցական մարմինները, որոնք իրականացնում են կանոնակարգված և համակարգված աշխատանք՝ ի նպաստ սովորողների: Այդ մարմիններն են.

Կառավարման խորհուրդը միացյալ է, կազմված՝ 14 անդամից

Մանկավարժական խորհուրդը, որում ընդգրկված են բոլոր մանկավարժական աշխատողները, ծնողխորհրդի և աշխորհրդի նախագահները՝ 26 անդամ

Ծնողական խորհուրդը, որը կազմված է դասարանական ծնողական խորհրդի նախագահներից՝ 13 անդամ

Աշակերտական խորհուրդը՝ կազմված 11 անդամից

Առարկայական մեթոդական միավորումները՝

- տարրական
- բնագիտական
- հումանիտար

Խորհրդակցական մարմինները իրականացնում են իրենց օրենսդրությամբ և կանոնադրությամբ վերապահված լիազորությունները հերթական և արտահերթ ռեժիմներով, մասնակցային և համագործակցային եղանակներով՝ իրենց աշխատակարգին համապատասխան:

Կառավարման խորհուրդը գործում է միացյալ, վերահսկում է ԴՁԾ կատարումը, ուսումնադաստիարակչական և ֆինանսատնտեսական գործունեությունը, սերտ համագործակցում է տնօրենի հետ, հետևողական լինելով այդ գործունեության ճիշտ, նպատակային և արդյունավետ իրագործմանը:

Մանկավարժական խորհուրդը քննարկում է օրենքով, դպրոցի կանոնադրությամբ իրեն վերապահված հարցերը՝ առավելապես հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման, սովորողների առողջության, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների անհատական ուսուցման պլանների, կրթության որակի ապահովման հետ կապված հարցերը, անդրադառնում է ընթացիկ հարցերին և կոլեկտիվ պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար:

Աշակերտական խորհուրդը կարևոր ու առանցքային դերակատար պետք է լինի ինչպես ժողովրդավարական արժեքների կրթման գործնական կիրառության համար, այնպես էլ՝ որպես խորհրդակցական մարմին, որը ներգրավված է դպրոցական կյանքի կարևորագույն որոշումների ընդունմանը: Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում

դրանց իրագործմանը:Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս մի շարք առաջարկություններով, ներքին կարգապահական կանոնների կենսագործմանը, սովորողների արտաքին տեսքին և կեցվածքին վերաբերող, կազմակերպում է տարբեր միջոցառումներ:

Ծնողական խորհրդի դերը ոչ պակաս կարևոր է, քանի որ ծնողական համակազմը պետք է ուսուցչական համակազմի աջակիցը լինի, ոչ միայն պետք է պահանջի ուսուցչից, այլ պետք է դառնա ուսուցչի գործընկերը՝ իր իսկ երեխայի կրթման և դաստիարակման հարցում, քանի որ առանց ծնողի հետևողական աշխատանքի թերի կլինի ուսուցչի աշխատանքը և ապարդյուն՝ նրա ջանքերը:

Մեթոդական միավորումների նիստերի ժամանակ քննարկվում են մեթոդմիավորման փաստաթղթերի վարման կարգը, մեթոդմիավորման ուսուցիչների հետ աշխատանքի հիմնական ուղղությունները, ժամանակակից մանկավարժական մոտեցումները և առանձին առարկաների դասավանդման, գիտելիքի ստուգման, գնահատման չափանիշների, հարցաշարերի կազմման սկզբունքներին առնչվող և բազմաթիվ այլ հարցեր, նրանց ջանքերով է, որ դպրոցում կարող է բարձրանալ կրթության որակը, քանի որ նրանք պետք է ապահովեն նոր և առավել արդյունավետ մեթոդների ներմուծումը, դրանց կիրառումը, առաջավոր փորձի փոխանակումը և պարբերաբար կազմակերպվող խորհրդակցությունները:

Այս ամենը հանգեցնում է նրան, որ դպրոցում կարևոր և առանցքային է բոլոր մարմինների գործունեությունը, այդ ամենը պետք է կազմակերպվի տնօրենի անմիջական վերահսկողությամբ, նրա ճիշտ ուղղորդումներով և, որ ամենակարևորն է՝ հենց տնօրենի հետ համագործակցությամբ: Այս հարցում կարևոր է զարգացնել ծնող-ուսուցիչ, աշակերտ-ծնող, աշակերտ-ուսուցիչ, հարաբերությունները, քանի որ համագործակցությունը կբխի աշակերտի շահերից:

Ցանկացած կրթական համակարգ պետք է համախմբի կրթական գործընթացի բոլոր մասնակիցների (ուսուցիչ, աշակերտ, ծնող) ներուժը և ստեղծի նրանց միջև արդյունավետ համագործակցություն ինչպես դպրոցի, համայնքի, այնպես էլ պետական մակարդակում և այդ դեպքում իրագործելի կդառնան բոլոր նպատակները, որոնք կդրվեն դպրոցի առջև:

Ուժեղ կողմեր

- Դպրոցում գործում է միացյալ կառավարման խորհուրդ, որը պարտաճանաչ կերպով անցկացնում է նիստեր, քննարկում է դպրոցի գործունեությանը վերաբերող հարցեր

- Մանկավարժական խորհուրդը կազմված է դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողներից, ովքեր գործուն ներգրավվածություն ունեն նոր չափորոշիչներին համապատասխան կրթության կազմակերպման հարցում, իրականացնում են հերթական և արտահերթ նիստեր և վեր հանում մանկավարժական համակազմի առջև ծառացած խնդիրներ
- Ծնողական խորհուրդը կարևորագույն կապող օղակ է դպրոցի և ծնողների միջև, ներգրավված է ուսումնադաստիարակչական աշխատանքներում և պաշտպանում է սովորողների շահերը դպրոցում
- Աշակերտական խորհուրդը երաշխավորում է սովորողների ազատ կամահայտության իրավունքը, հանդես է գալիս տարբեր նախաձեռնություններով, կազմակերպում և ակտիվ մասնակցում են միջոցառումներին
- Այս բոլոր մարմինները գործում են տնօրենի հետ սերտ համագործակցությամբ, ելնելով սովորողի շահերից, առաջին տեղում դնելով կրթության որակը և ուսումնական բարենպաստ միջավայրը
- Իրականացվում է խորհրդակցական մարմինների կառուցվածքային և պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի օրինակելի վարումը

Թույլ կողմեր

- Դպրոցի Խորհրդի անդամներից որոշները հանրակրթության ներքին խնդիրներին անտեղյակ են, քանի որ ուղիղ առնչություն չունեն այս ոլորտի հետ
- Ակտիվության և նախաձեռնողականության պակաս, կապված հասարակական հիմունքներով աշխատանքի հետ
- Խորհրդակցական մարմինների կողմից իրենց գործառույթների հստակ իրականացման, կանոնակարգման, միմյանց միջև արդյունավետ համագործակցության պակաս
- Խորհրդակցական մարմինների անդամների՝ միմյանց միջև ակտիվ ու արդյունավետ համագործակցության պակաս
- Ծնողական խորհրդի կողմից թույլ մասնակցություն ուսումնական պրոցեսի կազմակերպման մեջ, նիստերին անդամների բացակայություններ
- Աշակերտական խորհուրդի իրենց բոլոր լիազորություններին իրազեկվածության պակաս
- Մեթոդական միավորումների պասիվություն
- Արտաքին կապերի ստեղծման փորձի պակաս

3.5 Հաստատության շենքային պայմանների նպատակային գործածությունը, ուժեղ կողմերը և թերությունները

Մինչ շենքային պայմանների նկարագրությանն անցնելը պետք է նշեմ, որ ըստ Կառավարության որոշման մեր դպրոցը ընդգրկված է մինչև 2026 թվականը 300 նոր կառուցվող դպրոցների ցանկում, և արդեն նպատակներ սահմանելիս պետք է հաշվի առնել այդ հանգամանքը: Իսկ մինչ այդ, վերլուծենք ներկայիս շենքային պայմանները, որոնք մեղմ ասած ոչ բարվոք են:

Կաթնառատի միջնակարգ դպրոցի շենքը հարմարեցված է, տիպային շենքի բացակայության պայմաններում, համայնքը այս կառույցը տրամադրել է դպրոցին՝ անհատույց օգտագործման իրավունքով և այն ծառայում է ուսուցման գործընթացը կազմակերպելու համար արդեն 30 և ավել տարի: Հիմնական շենքը երկհարկանի է, այն և համայնքապետարանի 1-ին հարկում գտնվող նախակրթարանի ու տարրական դասարանների ընդհանուր մակերեսը միասին կազմում են 536,2 մ^2 ,դասասենյակների ընդհանուր մակերեսը՝ 262,5 մ^2: Հիմնական շենքի մուտքի դուռը փոխված է՝եվրոպական արտադրության, առաջին հարկում տեղակայված է 3 դասասենյակ, ճաշարան 29,8 մ^2, սննդի պահեստ 2 մ^2, սանհանգույց 8,4 մ^2, գույքի պահեստ 2 մ^2: Երկրորդ հարկում տեղակայված է 5 դասասենյակ, ուսուցչանոց՝ 15,5 մ^2, տնօրենի կաբինետ՝ 13,4 մ^2, գրադարան 8,8 մ^2, զենքի պահեստ 4 մ^2, ընդհանուր առմամբ շենքի վիճակը գնահատվում է բավարար, բայց ուսուցման գործընթացի կազմակերպման համար պայմանները բավարար չեն: Տարրական 4 դասարանները և նախակրթարանը տեղակայված են հիմնական շենքից 50 մ հեռավորության վրա՝ համայնքապետարանի 1-ին հարկում, դասարանների փաստացի վիճակը բավարար է: Դպրոցը ունի նաև Արմաթ ինժեներական լաբորատորիա, որը գտնվում է հիմնական շենքից 100 մ հեռավորության վրա՝ մշակույթի տան 2-րդ հարկում :

Նպատակային գործածության մասով՝ շենքի տարածքը ծառայում է ողջ ծավալով, ազատ տարածքներ չկան: Ճաշարանը վերանորոգված է և տարրական դասարանների երեխաներին ամեն օր ապահովում է տաք ու համեղ սնունդով, գրադարանի տարածքը շատ փոքր է և ոչ հարմարավետ, նպատակային օգտագործման համար բավարար պայմաններ չունի, չունի նաև հարուստ գրադարանային ֆոնդ: Դասասենյակները արևկող են, հատակը փայտյա տախտակներից է պատրաստված, վիճակը բավարար է:

Դասասենյակներից մեկը անվանակոչված է դպրոցի նախկին սան՝ Ռուբեն Ալեքսանյանի անունով, ով զոհվել է սահմանին՝ դիվերսիոն հարձակման փորձը կանխելիս:

Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերեսը (քմ)	Մեկ սովորողին ընկնող մակերեսը (քմ)	Նորմերից պակաս կամ ավել մակերեսը (քմ)
Դասասենյակ N1	42,0	2,6	ավել
Դասասենյակ N2	22,3	2,03	ավել
Դասասենյակ N3	29,4	2,5	ավել
Դասասենյակ N4	16,8	1,68	պակաս
Դասասենյակ N5	12,6	1,8	պակաս
Դասասենյակ N6	18,1	2,26	ավել
Դասասենյակ N7	12,8	1,4	պակաս
Դասասենյակ N8	24,0	2,4	ավել
Դասասենյակ N9	18,9	2,7	ավել
Դասասենյակ N10	22,4	1,72	պակաս

Դասասենյակ N11	19,4	3,3	պակաս
Դասասենյակ N12	18,8	1,45	պակաս
նախակրթ N13	37,5	3,7	ավել

Դպրոցում մշակված և առկա է սովորողների ու անձնակազմի տարհանման պլան, երկու հարկերի միջանցքներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով:

Ջեռուցումը իրականացվում է էլեկտրաէներգիայով՝ ըստ դասարանների՝ էլեկտրաջեռուցիչներով,որոնք թվով 19-ն են, բոլոր դասարաններում ջերմաստիճանը նորմայի սահմաններում է(18-20^{0}C), միջանցքները չեն ջեռուցվում(8-10^{0}C): Դպրոցը ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ: Սանհանգույցները թվով 3-ն են, գտնվում են ոչ բարվոք վիճակում:

Ուժեղ կողմերը

- Դպրոցի շենքի տեղակայումը հարմար է, գտնվում է գյուղի կենտրոնական մասում
- Դպրոցն ունի վերանորոգված ճաշարան
- Տարածքը ցանկապատված է և անվտանգ սովորողների ազատ տեղաշարժման համար
- Դպրոցում գործում է Արմաթ լաբորատորիա
- Բակը ընդարձակ է՝ 500քմ տարածքով

Թույլ կողմերը

- Դպրոցի տիպային շենքի բացակայություն, դպրոցը գործում է հարմարեցված շենքերում
- Դասասենյակները չափերով փոքր են
- Չունի սպորտդահլիճ, հանդիսությունների դահլիճ, առանձին կաբինետներ և լաբորատորիաներ
- Դասարանների դռները և պատուհանները փոխված չեն
- Գրադարանը չափերով շատ փոքր է և անմխիթար վիճակում է
- ԿԱՊԿՈՒ սովորողների համար չկան խելամիտ հարմարեցումներ և պայմաններ, մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցման սենյակ

- Լոկալ ջեռուցման և գազաֆիկացման բացակայություն
- Դպրոցը չունի պահուստային ելքեր
- Ապաստարանի բացակայություն
- Բուժկետի բացակայություն

4. Նպատակների եվ խնդիրների սահմանում

Դպրոցի զարգացման ծրագիրը նախնական աշխատանքային փաստաթուղթ է՝ հիմնված դպրոցի ներկայիս վիճակի վերլուծության, ՀՀ կրթության գիտության,մշակույթի և սպորտի նախարարության ներկայացրած հանրակրթության զարգացման առաջնահերթությունների,որում նախապես պլանավորված են որոշակի գործողություններ և ներդրումներ, որոնք կհանգեցնեն ծրագրով սահմանված խնդիրների հաղթահարմանը և նպատակների իրագործմանը:

Այս պահին դպրոցի ամենամեծ հիմնախնդիրներից մեկը տիպային շենքի բացակայությունն է, և ըստ էության նպատակադրումներում պետք է առաջնային լինի հենց շենքի հարցը, բայց ելնելով դպրոցական նոր շենքի կառուցման մասին առկա Կառավարության որորշումից, ցանկանում եմ նպատակադրումներս կատարել հաշվի առնելով այդ փաստը, նպատակահարմար չէ այս պահին մեծ ֆինանսական միջոցների ներդրում ծրագրել հին շենքի բարեկարգման համար, այդ պատճառով ավելի ճիշտ է կենտրոնանալ մյուս ոլորտների վրա, իսկ շենքային պայմանները բարելավել այնքանով, որ ապահովված լինի սովորողների անվտանգ և հնարավորինս հարմարավետ ուսումնական միջավայրը:

Սահմանված նպատակները ընդհանուր առմամբ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ են, բայց դրանցից բխող գործողություններն ու միջոցառումները պետք է կրեն շարունակական բնույթ, լինեն պարբերական, որպեսզի ապահովեն ակնկալվող արդյունքների տևական բնույթը:

Նպատակ						
1. Հանրակրթական ծրագրերի իրագործման համար հարմարավետ և տրամադրող միջավայրի ստեղծում, ԿԱՊԿՈՒ սովորողների համար խելամիտ հարմարեցումներ և նրանց լիարժեք ներառում / կարճաժամկետ /						
Խնդիրներ	**Գործողություններ**	**Ժամկետ**	**Անհրաժեշտ Միջոցներ**	**Արդյունքների չափման մեխանիզմներ**	**Ռիսկեր**	**Ռիսկերի կանխման գործողություններ**
Շենքային պայմանների բարելավում, հաստատության նյութատեխնիկա	Ուսումնական հաստատության ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, նյութատեխնիկական անհրաժեշտ բազայի ձեռքբերում	2024-2025թթ.	Դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ	Զարգացման ծրագրի տարեկան հաշվետվություն, հանձնման-ընդունման ակտ, վերանորոգված դասարաններ, բավարար նյութատեխնիկական բազա	Ֆինանսական միջոցների սղություն,դպրոցական շենքի փոքր չափ	Պլանավորել ֆինան սական միջոցների ճիշտ կառավարում, համագործակցել վարչատնտեսական համակարգողի հետ
	Դպրոցի բակային տարածքի բարեկարգում,կանաչապատում	2024-2025թ	Դպրոցի բյուջե, մարդկային ռեսուրս	ՁԾՏՀ, բարեկարգված և կանաչապատված բակ	Սպասարկող անձնակազմի պասիվ վարքագիծ,	Հանձնարարականներ տալ սպասարկող անձնակազմին,

կան բազայի հարստացում		թ.			ծնողական և աշակերտական համակազմի աջակցության բացակայություն	հորդորել ծնողներին և աշակերտներին մասնակցել աշխատանքների ն, վարչատնտեսակ ան համակարգողի աջակցություն
	Միջանցքների արդիականացում, թեմատիկ, ազգային-մշակութային մոտիվներով ձևավորում	2024թ.	Դպրոցի բյուջե, աշակերտակա ն համակազմի ներուժ	Քննարկումներ դասղեկների, աշակերտական խորհրդի հետ, զանազան պաստառներով ձևավորված միջանցքներ	Սովորողների անտարբերությու ն	Մոտիվացնել սովորողներին մասնակցել պաստառի պատրաստմանը՝ որպես մրցույթ, պարգևատրել
Ապահովել անվտանգ , բարենպաստ ուսումնական միջավայր սովորողների,	Դպրոցը շուրջօրյա տեսահսկողության համակարգով ապահովում, տեսախցիկների տեղադրում	2024թ.	Դպրոցի բյուջե, հրավիրված մասնագետ	Ծառայությունների մատուցման պայմանագիր, Տեսախցիկների առկայություն,	Ծնողական համակազմի բացասական արձագանք	Բացատրական աշխատանքների անցկացում ծնողների հետ, տեսախցիկների առկայության առավելություններ ի ներկայացում
	ԿԱՊԿՈՒ սովորողների համար անհրաժեշտ	2025թ.	Դպրոցի բյուջե, արտաբյուջետ	Առկա տեխնիկական	Դպրոցական շենքի փոքր չափ,	Ըստ անհրաժշտությա

այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ սովորողների համար	անհատական տեխնիկական սարքավորումների ձեռքբերում, խտրական վերաբերմունքի բացառում		ային միջոցներ	միջոցներ, հանձնման-ընդունման ակտ, ձեռքբերված տեխնիկական սարքավորումներ	համապատասխան ծառայությունների մատուցման սենայկի բացակայություն	ն տարածք ձեռք բերել գյուղապետարանի շենքում
	Խորացնել համագործակցությունը ՏՄԱԿ-ի հետ, կատարել ուսուցիչների ԱՈՒՊ-ով նախատեսված աշխատանքների մշտադիտարկում	2024-2026թթ.	Խելամիտ հարմարեցումներ, կազմված ԱՈՒՊ-ներ	Իրականացված դասալսումներ, մանկխորհրդի արձանագրություններ, ԱՈՒՊ-ով սահմանված նպատակների իրագործում, լիարժեք ներառում	Ֆինանսական միջոցների սղություն, արտաբյուջետային միջոցների բացակայություն, դպրոցում աջակցման թիմի բացակայություն	Հայթայթել արտաբյուջետային միջոցներ, համալրել դպրոցի հաստիքացուցակով նախատեսված հոգեբանի թափուր պաշտոնը

Նպատակ						
2. Հանրակրթական պետական չափորոշչին համապատասխան ուսումնական գործընթացի իրականացում, կրթության որակի բարձրացում / միջնաժամկետ /						
Խնդիրներ	Գործողություններ	Ժամկետ	Անհրաժեշտ Միջոցներ	Արդյունքների չափման մեխանիզմներ	Ռիսկեր	Ռիսկերի կանխման գործողություններ

ՀՊՉ ներդրում և դրանով սահմանված վերջնարդյունքների ու կարողունակությունների ձևավորում	Դպրոցի 1-12-րդ դասարաններում ապահովել նոր չափորոշիչների լիարժեք ներդրումն ու դրանով սահմանված պահանջների իրագործումը	2024-2027թթ.	Դպրոցի բյուջե, նյութատեխնիկական հարուստ բազա, նման կրթության իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմ, ՏՀՏ միջոցներ	Մ/մ արձանագրություններ, չափորոշչին համապատասխան թեմատիկ և օրվա պլաններ, իրականացված նախագծային աշխատանքներ, խմբակի ու երկարօրյա ուսուցման ծրագրեր	Ֆինանսական միջոցների սղություն,շենքային պայմանների անհամապատասխանություն ներկայացված պահանջներին, նոր ծրագրային պահանջներ ընդունելու, դրանց հարմարվելու հետ կապված դժվարություններ	Մշակել և ներկայացնել նոր չափորոշչի ներդրման առավելությունները, դպրոցի բյուջեի հնարավորությունների սահմաններում ձեռք բերել անհրաժեշտ միջոցներ
	Նպաստել նորագույն ինտերակտիվ մեթոդների կիրառմանը դասին, հասնել թեմայով և ծրագրով սահմանված վերջնարդյունքներին	2024-2027թթ	Մեթոդական ուղեցույցներ, դիդակտիկ նյութեր	Մեթոդմիավորման արձանագրություններ, դասերի վարում նոր մեթոդների կիրառմամբ, նպատակի և վերջնարդյունքի համապատասխանություն	Նոր մեթոդների կիրառման հանդեպ թերահավատ վերաբերմունք	Ներկայացնել նոր մեթոդների կիրառման արդյունավետության օրինակներ, նման մեթոդների կիրառմամբ անցկացված տեսադասեր
	Դասապրոցեսը իրականացնել ՏՀՏ միջոցների	2024-2027թ	ՏՀՏ միջոցներ, լաբորատոր նյութեր,	Մ/մ արձանագրություններ,	Անհրաժեշտ միջոցների բացակայություն,	Հաճախակի անցկացնել մ/մ նիստեր, լինել

	կիրառմամբ, իրականացնել մեծ թվով լաբորատոր աշխատանքներ	թ.	անհրաժեշտ պարագաներ	կարողունակություններ ձևավորող և հետաքրքիր անցկացվող դասաժամեր	ուսուցչի թերի աշխատանք	հետևողական, ձեռք բերել անհրաժեշտ միջոցներ
	Երկարօրյա դասընթացների կազմակերպում	2024-2027թթ.	Դպրոցի բյուջե, ծնողների լրիվ կամ մասնակի ներդրումներ	Ընթացիկ զեկույցներ, հրամաններ, աշակերտների ցուցաբերած արդյունքների վերլուծություն, ուսուցման գործընթացում թերացող,ինչպես նաև ԿԱՊԿՈՒ սովորողների առաջընթաց	Ֆինանսական սուղ միջոցներ, դպրոցական շենքի ոչ համապատասխան պայմաններ	Հարմարեցնել շենքային պայմանները երկարօրյա ուսուցման կազմակերպման համար, համագործակցել վարչատնտեսական համակարգողի հետ
Զարգացնել	Առավել հաճախ կազմակերպել տարբեր թեմաներով ցերեկույթներ	2024-2029թթ	Դպրոցի բյուջե, մանկավարժական ներուժ	ՈՒԴԱՊ, ՆԳ, հաճախակի կազմակերպվող միջոցառումներ	Դասղեկների, մանկավաչժական աշխատողների պասիվություն	Պատվոգրերի, տարբեր մրցանակների շնորհում

սովորողների նախասիրությունները և կարողությունները խթանող արտադասարանական և արտադպրոցական ծառայությունները	Կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաներ, այցելություններ	2024-2029թթ	Աբոնեմենտայի ն տոմսեր, աշակերտների ներդրումներ	ՈՒԴԱՊ, ՆԳ, պարբերական կազմակերպված էքսկուրսիաներ, այցեր	Դասղեկների, ծնողների նախաձեռնողա կանության պակաս	Նախաձեռնողական ության խրախուսում
	Կազմակերպել և անցկացնել հետաքրքիր մրցույթներ, բարձրացնել օլիմպիադաների մասնակցության ցուցանիշը	2024-2029թթ	Դպրոցի բյուջե, ուսուցչական և աշակերտական ներուժ	Մանկխորհի արձանագրություններ, մրցույթների և օլիմպիադաների մասնակցության բարձր ցուցանիշ	Աշակերտների անտարբերություն, մասնակցության ցանկության բացակայություն	Պատվոգրերի, տարբեր մրցանակների շնորհում, խրախուսման տարբեր միջոցներ

Նպատակ						
3. Մանկավարժական համակազմի մասնագիտական կատարելագործում, կազմակերպչական կարողությունների զարգացում / միջնաժամկետ/						
Խնդիրներ	Գործողություններ	Ժամկետ	Անհրաժեշտ Միջոցներ	Արդյունքների չափման մեխանիզմներ	Ռիսկեր	Ռիսկերի կանխման գործողություններ

Ուսուցիչների մասնագիտական գիտելիքների , աշխատանքային ունակությունների կատարելագործում, ՏՀՏ-ների լիարժեք տիրապետում նրանց կողմից	Ուսուցչամանկավարժական անձնակազմի պարբերական վերապատրաստումներ, ինքնակրթության խթանում	2024-2027թթ.	Դպրոցի բյուջե, գրականություն, էլեկտրոնային ռեսուրսներ, ՏՀՏ միջոցներ	Վերապատրաստումների մասնակցության հաշվետվություններ, Պայմանագրեր, վերապատրաստված ուսուցիչների մեծ թիվ	Ուսուցիչների պասիվություն, ինքնակրթության սուղ հնարավորություններ, սոցիալական խոչընդոտներ	Ուսուցիչների խրախուսում, ինքնակրթության ռեսուրսների ձեռքբերում, մենթոր դպրոցի հետ համագործակցություն
	Խորհրդակցությունների կազմակերպում, պարտադիր և կամավոր ատեստավորմանը, տարակարգի ստացմանը և այլ մրցույթներին մասնակցության խրախուսում	2024-2026թթ.	Դպրոցի բյուջե, անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթներ, ուսուցիչների անձնական միջոցներ	Մեթոդական միավորումների նիստերի արձանագրություններ, վերապատրաստման և ատեստավորման նորմատիվ փաստաթղթեր, կամավոր ատեստավորված, տարակարգ ստացած, <<Տարվա լավագույնները>> և այլ մրցույթների մասնակից ուսուցիչներ	Ուսուցիչների մասնակցության ցանկության բացակայություն, անվստահություն, վախեր կամավոր ատեստավորման մասնակցության հանդեպ	Ոգևորել ուսուցիչներին՝կազմակերպելով հանդիպումներ կամավոր ատեստավորման շեմը հաղթահարած մանկավարժների հետ
	Հեռավար կրթության	2024-	Դպրոցի բյուջե,	Մեթոդմիավորումների	ՏՀՏ-ներից օգտվելու ունակության,	Երիտասարդ ուսուցիչների կողմից

	հմտությունները կատարելագործելու նպատակով ուսուցիչների սեմինարներին, վեբինարներին մասնակցության խթանում	2026թ թ.	էլեկտրոնային ռեսուրսներ, ՏՀՏ միջոցներ	արձանագրություններ, հեռավար դասեր հմտորեն անցկացնող ուսուցիչներ	ցանկության պակաս	ավելի մեծ աջակցություն ավագ սերնդին,փորձի փոխանակում, դասերին ՏՀՏ կիրառման ցուցանիշի բարձրացում
Մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածության բարձրացում, ստեղծագործական ունակությունների դրսևորում	Դասալսումների արդյունքների հիման վրա մանկավարժներին անհրաժեշտ մեթոդական և մասնագիտական աջակցության ցուցաբերում	2024-2026թ թ.	Համապատասխան մեթոդական ձեռնարկներ, մասնագիտական գրականություն, էլ. նյութեր	Մեթոդ միավորումների նիստերի արձանագրություններ, ուսուցիչների հետ քննարկումներ, ՈՒԴԱՊ	Նոր չափորոշիչների և միջին տարիքից բարձր ուսուցիչների դասավանդման, աշխատելաոճի անհամապատասխանություն	Ձեռք բերել հնարավորինս մեծ թվով մեթոդական ուղեցույցներ և հետեվողական լինել, որ ուսուցիչները առաջնորդվեն դրանցով, փոխեն աշխատելաոճը
	Խրախուսել խմբակների ծրագրերի կազմման, նոր, հետաքրքրական մեթոդների ներդրման հարցում	2024-2027թ թ.	Դպրոցի բյուջե, թղթային և էլեկտրոնային ռեսուրսներ	ԿԳՄՍ կողմից հաստատված խմբակի ծրագրեր և մեթոդներ,	Ուսումնական և ֆիզիկական միջավայրի անբավարար առկայություն	Կազմակերպել թիմային աշխատանք, համալրել թիմը բանիմաց և պրպտող ուսուցիչներով, հրավիրել փորձառու մասնագետներ

Աշխատակազմի աշխատանքայի ն կարգապահության բարձրացում	Կարգապահ աշխատողների,ինչպես նաև կատարողականի հիման վրա անձնակազմի խրախուսման և պարգևատրման բազմաչափ համակարգի ներդրում	2024-2027թթ	ԿԳՄՄ ԼՄ կողմից պարգևներ, դպրոցի բյուջե	Տնօրենի հրաման, կարգապահ և պարտաճանաչ ուսուցիչներ	Խրախուսման միջոցների սակավություն	Դիմել ԿԳՄՄՆ, ԼՄ, խրախուսման միջոցներ տրամադրելու առաջարկությամբ
	Ավելի բարձրացնել ուսուցչի հեղինակությունը դպրոցում և հասարակության մեջ, ստեղծել հարգանքի և վստահության մթնոլորտ	2024-2026թթ.	Ուսուցչի կատարած աշխատանքի արդյունքներ	Արձանագրություններ ծնողխորհրդի, աշակերտական խորհրդի նիստերից, հանդիպումներ համայնքի ներկայացուցիչների հետ, հարգված և արժանապատիվ ուսուցիչներ	Ուսուցչի, մանկավարժի մասնագիտության հանդեպ անտարբեր վերաբերմունք, ավելի <<նորաձև>> մասնագիտությունների նկատմամբ մեծ հետաքրքրություն	Պարբերական հանդիպումներ, քննարկումներ անցկացնել տարբեր սոցիալական խմբերի հետ ուսուցչի դերի, այդ մասնագիտության առաջնային կարևորության թեմայով

Նպատակ
4. Ազգային և պետական արժեհամակարգ ստեղծող մասնակցային կառավարման ապահովում, կառավարման

արդյունավետության բարձրացում /երկարաժամկետ/						
Խնդիրներ	**Գործողություններ**	**Ժամկետ**	**Անհրաժեշտ միջոցներ**	**Արդյունքների չափման մեխանիզմներ**	**Ռիսկեր**	**Ռիսկերի կանխման գործողություններ**
Խորհրդակցական մարմինների ակտիվ ներգրավվածություն կառավարման գործընթացին, կառավարման և խորհրդակցական մարմինների միջև համագործակցության խորացում	Կառավարման գործընթացում խորհրդակցական մարմինների գործառույթների պատշաճ իրականացում,հրապարակայնության և թափանցիկության ապահովում	2024-2029թթ.	Նորմատիվ իրավական ակտեր, ՏՀՏ միջոցներ	Նիստերի արձանագրություններ, դպրոցի կայքում հրապարակումներ, թափանցիկ կառավարում	Նիստերի քարտուղարների թերի աշխատանք, կայքում հրապարակումների բացակայություն	Հետևողական լինել նիստերի պատշաճ անցկացման և արձանագրությունների կազմմանը, հանձնարարական օպերատորին, հրապարակայնության ապահովման հարցում
	Խորհրդակցական մարմինների միջև համագործակցության խորացում, հավասար պայմանների ապահովում	2024-2027թթ.	Քննարկումների իրականացման համար կահավորված դասարան	Հանդիպումների արձանագրություններ, համատեղ քննարկումների արդյունքում ընդունված որոշումներ	Համագործակցող կողմերի հետաքրքրվածության և նախաձեռնողականության պակաս, զբաղվածությամբ պայմանավորված ոչ հաճախակի հանդիպումներ	Հարմարեցնել հանդիպումների կազմակերպումը բոլոր շահագր գիռ կողմերին, կարևորել յուրաքանչյուրի դերը, և՛ որպես առանձին մարմին, և՛ այդ մարմնի դերը համագործակցության մեջ

	Ծնողներին մասնակից դարձնել սովորողների կրթության և դաստիարակության գործընթացին ապահովել առողջ համագործակցային աշխատանքային հարաբերություններ աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ, ծնող-ուսուցիչ օղակներում	2024-2029թթ.	Նորմատիվ իրավական ակտեր, ներքին կարգապահական կանոններ	Ծնողխորհրդի արձանագրություններ, հաստատված առողջ հարաբերությունները դպրոցի և ծնողական համակազմի միջև	Ծնողական համակազմի անտարբերություն, երեխաների ուսման գործընթացով հետաքրքրվածության պակաս, ուսուցչին աջակցելու պատրաստակամության բացակայություն	Տանել բացատրական աշխատանքներ, աջակցել էլեկտրոնային մատյաններից օգտվելու հարցում
Յուրաքանչյուր մարմնի իր գործառույթների մասին իրազեկում	Ապահովել խորհրդակցական մարմինների գործառույթների իմացությունը՝ սեմինարների, հանդիպումների, զեկույցների միջոցով	2024-2027թթ.	Նորմատիվ իրավական ակտեր	Հանդիպումների արձանագրություններ, իրենց գործառույթներին իրազեկված խորհրդակցական մարմիններ	Խորհրդակցական մարմինների պասիվ մասնակցություն հանդիպումներին, հեռավար կազմակերպված հանդիպումներին հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակաս	Բացատրական աշխատանքներ, կառավարման գործընթացին մասնակցության կարևորության ներկայացում
	Զարգացնել կառավարման և խորհրդակցական մարմինների	2026-2029թթ.	Այլ դպրոցների դրական օրինակներ	Նախաձեռնություններ, կազմակերպված և իրականացված	Դպրոցի գործունեությանը հնարավոր բացասական	Տնօրենի կողմից անմիջական վերահսկողություն և ուղղորդում

	կարողությունները			աշխատանքներ	միջամտություններ	

Նպատակ						
5. **Մասնագիտական կողմնորոշում ունեցող, կարողունակ և հասարակությանն ինտեգրված քաղաքացու ձևավորում, ով վաղ տարիքից գիտակցում է երկրի և համայնքի կարիքները /երկարաժամկետ/**						
Խնդիրներ	**Գործողություններ**	**Ժամկետ**	**Անհրաժեշտ Միջոցներ**	**Արդյունքների չափման մեխանիզմներ**	**Ռիսկեր**	**Ռիսկերի կանխման գործողություններ**
Աշակերտների ինքնավարության խթանում, կայուն արժեհամակարգի ձևավորում, մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքների իրականացում	Սովորողների նախասիրությունների բացահայտում, նրանց իրավունքների և պարտականությունների քննարկում սեմինարների և աշխատաժողովների միջոցով	2024-2029թթ.	Նորմատիվ իրավական ակտեր, ներքին կարգապահական կանոններ, հրավիրված մասնագետներ, ՏՀՏ միջոցներ	Սեմինարների, աշխատաժողովների անցկացման արձանագրություններ, տեսաձայնագրություններ, իրազեկված աշակերտներ	Սովորողների նախասիրությունների բացահայտման հետ կապված դժվարություններ	Հետևողական լինել, որ դասղեկները իրենց տարեկան աշխատանքային պլաններում ընդգրկեն սովորողների նախասիրությունների բացահայտման և մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ միջոցառումներ
	Ծնողական համայնքի հետ հանդիպումների անցկացում՝ իրենց	2024-2029թ	ՏՀՏ միջոցներ, հանդիպման համար	Հանդիպման արձանագրություններ, հանդիպման	Կապված գյուղական բնակավայրի	Ցսահմանափակվել ծնողներին հրավիրելով,

	մասնագիտությունների առանձնահատ կությունների ներկայացում, սովորողների մասնագիտական կողմնորոշմանն աջակցում	թ.	հարմարեցվա ծ միջավայր	շնորհիվ մասնագիտության հարցում 20-25% կողմնորոշված սովորողներ	հետ՝ ոչ բազմազան մասնագիտությու ններ, ծնողների նման հանդիպումներից խուսափում	նման հանդիպումներ կազմակերպել համայնքի տարբեր մասնագիտությու ններ ունեցող բնակիչների հետ
	Տեղեկատվական հանդիպումներ՝մասնագի տական կրթություն առաջարկող ուսումնա կան հաստատությունն ե ր ի ներկայացուցիչների հետ	2024-2029թ թ.	ՏՀՏ միջոցներ, հանդիպման համար հարմարեցվա ծ միջավայր	Հանդիպման տեսաձայնագրությո ններ, հանդիպման շնորհիվ մասնագիտության հարցում 30-40% կողմնորոշված սովորողներ	Ներկայացուցիչն երի կողմից գյուղական բնակավայրեր ժամանելու անհնարինությու ն, նաև կապված աշակերտների ոչ մեծ թվաքանակի հետ	Նման հանդիպումների ն մասնակցել ավելի մեծ դպրոցներ ժամանած ներկայացուցիչն երի հետ, անհրաժշտությա ն դեպքում տրանսպորտայի ն միջոցի տրամադրում
Սովորողներին կրթության գործընթացում մոտիվացում և առաջադիմությա ն բարձրացում	Ապահովել յուրաքանչյուր սովորողի կրթության մատչելիություն, հավասար մասնակցության հնարավորություն	2024-2029թ թ.	Նոր մեթոդներ, դիդակտիկ նյութեր	Մեթոդ միավորումների նիստերի արձանագրությունն ե ր, ուսուցիչների հետ քննարկումներ, հասանելի կրթություն, լիարժեք	Գործիքակազմի բացակայություն, մեթոդների կիրառման ցանկության պակաս	Ձեռք բերել հնարավորինս մեծ թվով մեթոդական ուղեցույցներ և հետեվողական լինել, որ ուսուցիչները

				ներառված ԿԱՊԿՈՒ սովորողներ		առաջնորդվեն դրանցով
	Սովորողների մեջ ձևավորել պատշաճ վարքագիծ ու վարվելակերպ, բացառել բռնության, բուլինգի դեպքերը	2024-2029թթ.	Ներքին կարգապահական կանոններ, բուլինգի հետեվանքների մասին տեսանյութերի դիտում	Դասղեկական ժամեր, հանդիպումներ ոստիկանության աշխատակիցների հետ, ապահով ուսումնական միջավայր	Վատ սովորույթների ձեռք բերում շրջապատից, մեդիա հարթակներից	Հորդորել ծնողներին հետևողական լինել երեխաների ընկերական շրջապատի ընտրությանն ու նրանց վիրտուալ շփումներին
Պետական և տեղական կառավարման մարմինների և այլ ուսումնական հաստատությունների հետ համագործակցության ընդլայնում	Համայնքի հետ համատեղ ծրագրերի և նախաձեռնությունների իրականացում, այդ թվում սոցիալ-մշակութային միջոցառումներ՝ համայնքի և հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ	2024-2029թթ	Դպրոցի բյուջե, միջոցառումների ծրագրեր, համայնքի նրդրումներ	ՈՒԴԱՊ, ՆԳ, տեսաձայնագրություններ, իրականացված նախագծային աշխատանքներ, միջոցառումներ	Համայնքային մարմինների պասիվություն	Քննարկել համայնքի ղեկավար մարմինների հետ միջոցառում ների կազմա կերպման կարևորության հարցը՝ սովորողների կյանքում
	Համագործակցային հարաբերություններ հաստատել այլ ուսումնական հաստատությունների հետ, սերտ կապ պահել մենթոր դպրոցի հետ	2024-2029թթ	Համատեղ իրականացվող ծրագրեր, դպրոցների միջև	ՈՒԴԱՊ, ՆԳ, տեսաձայնագրություններ, այլ ուսումնական հաստատությունների հետ հաստատված հարաբերություններ, մենթոր դպրոցի	Այլ հաստատությունների կողմից համագործակցելու ցանկության բացակայություն, տրանսպորտային հիմնական	Քննարկել այլ հաստատությունների տնօրենների հետ համագործակցության անհրաժշտությունը, հյուրընկալել

			անցկացվող մրցույթներ, ՏՀՏ միջոցներ	աջակցություն	երթուղու բացակայություն	նրանց մեր դպրոց

Նպատակ						
6. ՏՀՏ միջոցների խորացված ներդրում ու կիրառում կառավարման և ուսումնադաստիարակչական ոլորտներում/կարճաժամկետ/						
Խնդիրներ	**Գործողություններ**	**Ժամկետ**	**Անհրաժեշտ Միջոցներ**	**Արդյունքների չափման մեխանիզմներ**	**Ռիսկեր**	**Ռիսկերի կանխման գործողություններ**
Կառավարման ոլորտում իրականացվող փաստաթղթա շրջանառությունը մեծապես իրականացնել ՏՀՏ միջոցներով	Ապահովել էլեկտրոնային մատյանների անխափան մատենավարություն՝ նոր չափորոշչին համապատասխան գնահատմամբ	2024-2027թթ.	ՏՀՏ միջոցներ, ուղեցույցեր	Էլ. մատյաններ, բարձրակարգ մատենավարություն	Ուսուցիչների թերացում, ծրագրի խափանումներ	Հետևողական լինել, որ ուսուցիչները պատշաճ կերպով իրականացնեն մատենավարությունը, կապ պահել ԿՏԱԿ-ի հետ
	Կազմակերպել դպրոցի էջի վարումը դպրոցների	2024-2025թթ.	ՏՀՏ միջոցներ, ուղեցույցեր	ԴԿՏՀ-ում իրականացված դասաբաշխում, ձևավորված և հաստատված	Թերացումներ կատարվող աշխատանքներում, օպերատորի և տնօրենի ոչ	Լինել հետևողական, ցանկացած աշխատանք կատարել նշված

	կառավարման տեղեկատվական համակարգում (այսուհետ՝ ԴԿՏՀ).			հաստիքների ցուցակ, տարիֆիկացիա, ուս. պլան, դասաբաշխում	պատշաճ համագործակցություն	ժամկետում
Ուսումնադաստիարակչական գործընթացում ՏՀՏ միջոցների նպատակային ներդրում, իմացության մակարդակի բարձրացում	Բացահայտել ուսուցիչների և աշակերտների ՏՀՏ միջոցների լիարժեք կիրառման կարիքները, մշակել այդ կարիքների բավարարմանն ուղղված ծրագրեր	2024-2026թթ.	ՏՀՏ միջոցներ, համացանց, կրթական հարթակներ, էլեկտրոնային ռեսուրսներ	Մեթոդ միավորումների նիստերի արձանագրություններ, ուսուցիչների և աշակերտների հետ քննարկումներ	ՏՀՏ միջոցներով ոչ լիարժեք ապահովվածություն, թույլ համացանց, պասիվ շահառուներ	Ներկայացնել ՏՀՏ միջոցներից օգտվելու կարևորությունը, անհրաժշտությունը, ՏՀՏ հզոր միջոցների ձեռքբերում բարերարներից, մինչ նոր շենքի և նյութատեխնիկական բազայի առկայությունը
	Դասերը մեծամասամբ անցկացնել ՏՀՏ միջոցների կիրառմամբ՝ դասավանդման նպատակներին և ուսումնառությա	2025-2027թթ.	Տեխնիկական հարուստ բազա, սմարթ գրատախտակներ, համակարգիչներով զինվածության բարձր մակարդակ	Համակարգչային ցուցադրումներ, տեսադասերի անցկացում, արդյունավետ դասապրոցես	Մեդիագրագիտության պակաս	Երիտասարդ ուսուցիչների կողմից աջակցության ցուցաբերում

	ն վերջնարդյունքն երին համապատասխ ան					
	Արդիականացնել դպրոցի պաշտոնական և ֆեսբուքյան էջի վարումը	2024-2025թթ.	ՏՀՏ միջոցներ	Ակտիվ վարվող էջեր, որոնց շնորհիվ ցանկացած անձ կարող է հետևել դպրոցի անցուդարձին	Օպերատորի թերի աշխատանք, աշակերտական խորհրդի պասիվություն	Բացատրական աշխատանքներ տանել օպերատորի և աշխորհրդի նախագահի հետ, նշանակել պատասխանատուներ

Նպատակ						
7. Ներքին կարգավորման իրավական ակտերի շարունակական բարելավում և շահառուների իրազեկվածության բարձրացում /կարճաժամկետ/						
Խնդիրներ	**Գործողություններ**	**Ժամկետ**	**Անհրաժեշտ միջոցներ**	**Արդյունքների չափման մեխանիզմներ**	**Ռիսկեր**	**Ռիսկերի կանխման գործողություններ**
	Քննարկման փուլում գտնվող նախագծերի մասին տեղեկատվության տարածում,քննարկմա	2024-2025թթ.	ՏՀՏ միջոցներ, իրավագիտակից մանկավարժներ	Քննարկումներ, արձանագրություններ, իրավական դաշտում առավել իրազեկված և	Շահառու կողմերի իրավական ակտերի նախագծերի	Հաճախակի կազմակերպել իրազեկող հանդիպումներ, առաջացնել

Իրավական գրագիտության բարձրացում, ներքին իրավական ակտերի նախագծերի քննարկմանն և դրանց ընդունմանը մանկավարժական համակազմի մասնակցության ապահովում	նը մանկավարժական անձնակազմի ներգրավվածության մեծացում			գրագետ անձնակազմ, ովքեր անմիջական մասնակցություն են ունենում այդ ակտերի ստեղծմանը	քննարկմանը մասնակցության ցանկության պակաս	հետաքրքրություն, գործընթացի մասնակցության հանդեպ
	Գործող և փոփոխված իրավական ակտերի վերաբերյալ դպրոցի անձնակազմի իրազեկում, քննարկումներ խորհրդակցական մարմիններում, լուսաբանում	2024-2025թթ.	ՏՀՏ միջոցներ, փոփոխված իրավական ակտեր	Արձանագրություններ, քննարկումների տեսաձայնագրումներ, իրավական ակտերի ավելի դյուրին կիրառում	Հետաքրքրության պակաս՝ նոր ընդունված կամ փոփոխված իրավական ակտերին ծանոթանալու հանդեպ	Պարբերաբար ներկայացնել մանկավարժի իրավագիտակից և իրազեկ լինելու անհրաժշտությունը, ներկայացնել դրա կարևորությունը
	Իրավական ակտերի մշակման գործընթացին մանկավարժների մասնակցություն, առաջարկների ներկայացում	2024-2026թթ.	Կանոնադրություն, ներքին կարգապահական կանոններ, այլ իրավական ակտեր	Արձանագրություններ, իրավագիտակից մանկավարժներ	Իրավագիտակցության ցածր մակարդակ	Շարունակական քննարկումներ, անկաշկանդ մասնակցության հնարավորություն

5. ՎԵՐՋԱԲԱՆ

Ասել է, թե չկա ավելի հզոր ուժ, քան գիտելիքը, գիտելիքներով զինված մարդը անպարտելի է: Փաստորեն, դպրոցը այն վայրն է, ուր անձը դառնում է հզոր, անպարտելի, պատրաստ դիմակայելու կյանքի ցանկացած դժվարության, գիտելիքն է, որ տալիս է թևեր, անասելի հնարավորություններ՝ հասնելու մեծ բարձունքների, կայանալու և իրենից հետո որոշակի հետք թողնելու, այդ պատճառով պետք է պահել ու փայփայել, զարգացնել ու կատարելագործել այն վայրը, որը մարդուն տալիս է գիտելիք ու կերտում որպես անհատականություն:

Կազմելով դպրոցի զարգացման հնգամյա ծրագիրը, ես փորձել եմ սահմանել այնպիսի նպատակներ, որոնք կապահովեն սովորողների ակադեմիական առաջընթացը, կբարձրացնեն կրթության որակը, ուսուցիչների պատրաստվածության աստիճանը, մասնագիտական կարողությունները, հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների ներգրավվածությունը, դասավանդման համար անհրաժեշտ ռեսուրսների հասանելիությունը և կիրառությունը, ապահով և տրամադրող մթնոլորտի ձևավորումը:

Իրավիճակի վերլուծությունը տվել է հնարավորություն սահմանելու վերը թվարկված նպատակները, դրանցից որոշները կիրագործվեն մեկ-երկու ուսումնական տարիների ընթացքում, իսկ որոշները ծրագրի իրագործման ողջ ընթացքում ու կկրեն շարունակական բնույթ, կատարողականի վերաբերյալ ամեն տարվա ավարտից հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում կկազմվի և կառավարման խորհրդին կներկայացվի կատարողականի մասին հաշվետվություն: Քանի որ կարող է իրավիճակներում փոփոխություններ գրանցվել և որոշակի գործողությունների կատարում կորցնի իր իմաստն ու նշանակությունը, իսկ որոշ գործողությունների կատարում դառնա առաջնահերթ, ուստի ծրագրում հնարավոր է փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկություններ անել, այդ ճկունությունը հնարավորություն կտա ավելի ճիշտ և արդյուավետ իրագործել մեր ծրագիրը:

Լիահույս եմ, որ իմ կազմած զարգացման ծրագիրը լիարժեք կիրագործվի և կտա իր քաղցր պտուղները մեր դպրոցին, սովորողներին, ծնողներին և մանկավարժներին: Դպրոցում կա ձևավորված թիմ, ի դեմս մանկավարժական և ծնողական համակազմերի, ուսումնաօժանդակ անձնակազմի, ովքեր պատրաստ են դրական փոփոխությունների և համագործակցության, վերջերս մեր թիմին միացավ նաև վարչատնտեսական համակարգողը, ով պատրաստ է ցանկացած դրական նախաձեռնության աջակցել: Համագործակցելով այս ամբողջական թիմով մենք կիրականացնենք մեր առջև դրված բոլոր նպատակները, հաղթահարելով ցանկացած փորձություն, իսկ նոր դպրոցական շենքի կառուցումը մեզ կտա անսպառ հնարավորություններ՝ անելու ավելին և օր-օրի էլ ավելի կատարելագործելու դպրոցը ու ի շնորհիվ դրա՝ հզորացնելու ու շենացնելու մեր երկիրը: